ՅՕԲԵԼԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—

Անցեալ անգամ խօսելով Բագուի Կուլտ. Մխիթեան հրատարակչ. սեկցիայի որոշման մասին, մոռացանք յիշել, որ նա որոշել է նաև հիմնել մի տպարան և յիշատակ մեծ յօբելեանին։ Բացի դրանից մեզ հաղորդում են, որ նա որոշել է իր հրատարակութիւնները տարածել հայ ժողովրդի մէջ ձրիաբար և դրա համար մտադիր է կոչ անել հասարակութեան, որ ունևոր անձինք որոշ գումարներ նուիրեն այդ նպատակով։

Ի դէպ պէտք է ուղղենք մի սխալ։ Մօպասանի պատմուածքների շարքում յիշված «Սիրելի բարեկամ» պատմուածի ֆրանսիական անունը ոչ թէ «Cher Ami» է, այլ «Bel Ami»։

—

Ամերիկայի «Ազգ» շաբաթաթերթը ողջունելով համազգային յօբելեանը և դպրոցական ֆոնդը, յորդոր է կարդում Ամերիկայի հայ հասարակութեան՝ ջերմ մասնակցութիւն ունենալ։

—

Որովհետև մեզ դիմում են զանազան կողմերից հարցմունքով, թէ ինչ ձևով պէտք է մասնակցել համազգային յօբելեանին, հոկտեմբերի 12-ին և 13-ին, նարկաւոր ենք համարում յայտնել, որ ամեն մի քաղաքի, աւանի, համայնքի հայերը, անհատները և հատատուութիւնները պէտք է շնորհաւորեն յօբելեանը Կաթողիկոսի անունով կամ հեռագիրներով, կամ ներկայացուցիչներով և պատգամաւորութիւններով, իսկ տեղերում պէտք է կազմակերպել հանդէսներ, դասախօսութիւններ, երեկոյթներ, ցերեկոյթներ և պէտք է կատարեն հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆոնդի և ուղարկեն Էջմիածնի կենտ. յօբել. յանձնաժողովին։ Նըվէրները կարելի է ուղարկել նաև «Մշակի» խմբագրութեան, որ կը հասցնէ ըստ պատկանելոյն։ Թող ամեն մի անհատ նոյնիսկ իր լումայ ձգէ ընդհանուր գանձանակի մէջ։

—